

## Հ. Կ. ՓԱՆՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ՄԻՋԱՐՈՒԹԻՈՂԻԱՅԻ ԽՆԱՇԽՈՒՏԻ 25 ՏԱՐԻՆ

## I Պատմական ակնարկ

Նախառևոլյուցիոն Հայաստանում միկրոբիոլոգիան գոյություն դրաները Միայն սովորական իշխանության օրով հնարավորություններ ու նախադրյալներ ստեղծվեցին գիտության համարյա բոլոր ճյուղերի, այդ թվում նաև միկրոբիոլոգիայի զարգացման համար:

Հայաստանում միկրոբիոլոգիայով զբաղվող առաջին հիմնարկը հանդիսացավ Հայկական ՍՍՌ հողագործության ժողովրդական կոմիսարիատին և ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդին առնթեր 1922—1923 թվականներին կազմակերպված կենտրոնական միացյալ լաբորատորիան: Այդ լաբորատորիայի կազմակերպման, հետագայում նրա գիտական գործունեության դրսերման և, մասնավորապես, միկրոբիոլոգիական բնույթի գիտահետազոտական աշխատանքների ծավալման և այդ բնագավառի համար երիտասարդ կազմերի պատրաստման գործում անգնահատելի ծառայություններ է մատուցել նույն լաբորատորիայի գիտական ղեկավար պրոֆ. Պապա Բեծանի Քալանքարյանը:

Հետագայում միկրոբիոլոգիական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ սկսեցին կատարել նաև հիշյալ լաբորատորիայի բազայի վրա կազմակերպված պարարտացման-ագրոհողագիտական կայանը, սանհիտարա-բակտերիոլոգիական ինստիտուտը, ինչպես նաև գյուղատնտեսական, թժկական, անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտների միկրոբիոլոգիական ամբիոններն ու լաբորատորիաները: Սակայն Հայաստանում միկրոբիոլոգիական գիտահետազոտական ծավալուն աշխատանքներ սկսվեցին, երբ 1935 թվականին երևանում կազմակերպվեց ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը և նրա բիոլոգիական ինստիտուտին կից միկրոբիոլոգիայի սեկտորը: Վերջինիս կազմակերպման գործում նույնպես մեծ ծառայություն է մատուցել Պ. Պա-

լանքարյանը, որի անմիջական դեկավարությամբ 1936 թ. մարտի 28-ից<sup>1</sup> միկրոբիոլոգիայի սեկտորն սկսեց իր զիտահետազոտական աշխատանքները։ Սակայն, ցավոք պետք է նշել, որ այդ սեկտորը հազիվ մենք տարի վեց ամիս գործելուց հետո 1937 թ. օգոստոսի 7-ին լուծարքի ենթարկվեց։

Տողերիս գրով՝ 1938 թ. գեկտեմբերի 16-ին ՍՍՌՄ զիտությունների ակադեմիայի նախագահության ուղղած իր զեկուցագրում, հայկական ֆիլիալի նախագահության կողմից հիշյալ միկրոբիոլոգիայի սեկտորի լուծարքի ենթարկվելը համարելով անհիմն ու շպատճառաբանված, հիմնավորում է Հայկական ՍՍՌ-ում միկրոբիոլոգիայի զարգացման համար հայկական ֆիլիալում միկրոբիոլոգիայի սեկտոր ունենալու անհրաժեշտությունը։

ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի նախագահությունը, ընդուածելով հիշյալ զեկուցագրի հեղինակին, կարգադրում է հայկական ֆիլիալի նախագահությանը բիոլոգիական ինստիտուտին կից վերստին կազմակերպել միկրոբիոլոգիայի սեկտոր։ Այդ կարգադրության համաձայն հայկական ֆիլիալի նախագահությունը բիոլոգիական ինստիտուտին կից 1939 թ. մարտի 3-ին կազմակերպում է միկրոբիոլոգիայի և անասնապահության խմբակ<sup>2</sup>, Վերջինս նախագահության որոշմամբ վերանվանվում է անասնապահության սեկտոր՝ միկրոբիոլոգիայի խմբակով։

Միկրոբիոլոգիայի սեկտորը սկզբում ուներ միայն 4 զիտական աշխատակից։ Առաջ այդ օրվանից ել Հայաստանում սկսվում են միկրոբիոլոգիայի բնագավառում ավելի ծավալուն զիտահետազոտական աշխատանքներ։ Միկրոբիոլոգիայի խմբակը մոտ երկու տարի աշխատելուց հետո ցույց տվեց, որ նա ընդունակ է ինքնուրույն գործելու, ակտուալ պրոբլեմներ լուծելու և դրա համար էլ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահությունն անհրաժեշտ դաշտ<sup>3</sup> բիոլոգիայի ինստիտուտում ունենալ միկրոբիոլոգիայի ինքնուրույն սեկտոր՝ 1941 թ. փետրվարի 1-ին<sup>4</sup>, բիոլոգիական ինստիտուտի անասնապահության սեկ-

<sup>1</sup> Հիմքը՝ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահության 1936 թ. մարտի 28-ի արձանագրությունը՝ ՍՍՌ ԳԱ արխիվ, գործ № 7, թիվը՝ 16։

<sup>2</sup> ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահության 1939 թ. մարտի 3-ի № 7 արձանագրություն, կետ. 5։

<sup>3</sup> ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահության 1940 թ. փետրվարի 3-ի № 3 արձանագրություն, կետ. 2։

<sup>4</sup> Նույնի 1941 թ. փետրվարի 1-ի № 4 արձանագրություն, կետ. 4։

Մորը լուծարքի հնթարկվելու կապակցությամբ կազմակերպվեց միկրոբիոլոգիայի սեկտոր՝ 8 գիտական աշխատակիցներով:

Միկրոբիոլոգիայի սեկտորն իր գոյության առաջին տարիներում հիմնականում զբաղված էր անասունների կերանյութի բիոլոգիական վերամշակման հարցերով, Հայաստանի աղակալած հողերի միկրոբիոլոգիական բնութագրմամբ և մի շարք բույսերի բակտերիալ հիվանդությունների հարուցիչների բիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Խնդիրներ, որոնց լուծումը տեսական և գործնական կարևոր նշանակություն պիտի ունենար:

Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին միկրոբիոլոգիայի սեկտորը, չնայած ծանր պայմաններին, ավելի ընդարձնեց իր հետազոտությունները, մասնավորապես սկսեց հայտնաբերել ու հետազոտել տնտեսական կարևոր նշանակություն ունեցող կերային շաքարասնկերը, որոնցով հետազայտմ մշակելով հարգը և ծղոտը, ցուց տվեց, որ վերջիններիս կերային արժեքը զգալիորեն բարձրանում է: Սեկտորը մշակեց նաև պտղատու ծառերի բակտերիալ հիվանդությունների դեմ պայքարելու էֆեկտիվ միջոցառումներ:

Եթե 1943 թ. նոյեմբերին ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի քաղաքի վրա կազմակերպվեց ՀՍՍՌ գիտությունների ակադեմիա, նախկին բիոլոգիական ինստիտուտին կից գոյություն ունեցող միկրոբիոլոգիայի սեկտորը վերակազմվեց ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի միկրոբիոլոգիայի ինքնարույն սեկտորի՝ 16 գիտական և վարչատնտեսական աշխատակիցներով:

Այդ սեկտորը, 1943 թվականից սկսած ծավալուն աշխատանքներ է կազմակերպել հողային միկրոօրգանիզմների, բույսերի բակտերիալ հիվանդությունների հարուցիչների և կերային ու խմորիչ շաքարասնկերի բիոլոգիական առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ: Միկրոբիոլոգիայի սեկտորն իր գիտական հետազոտությունների ընթացքում հայտնաբերեց այնպիսի օգտակար հողային միկրոօրգանիզմներ, որոնք իրենց կենսագործունեության պրոցեսում արտադրած մետաբոլիտներով մեծապես նպաստելով բույսերի սննդառության գործին, բարձրացնում են վերջիններիս բերատվությունը: Սեկտորը բացահայտեց բանջարանո-

1 Տե՛ս Հայկական ՍՍՌ Մինիստրների սովորի 1943 թ. նոյեմբերի 10-ի 703 արձանագրությունը:

ցաւին բռւլսերի և պաղատու ծառերի մի քանի այլատեսակների մոտ բակաերիալ հիվանդություններ առաջացնող միկրորդանիզմների բիոլոգիական առանձնահատկությունները և մշակեց այլ հիվանդությունների դեմ պայքարելու էֆեկտիվ միջոցառումներ:

Միկրոբիոլոգիայի սեկտորն իր հետազոտությունների շնորհիվ կարողացավ Հայաստանում տարածված գալլուկների տարբեր տեսակների, հատապտուղների, պտուղների էպիֆիտային միկրոֆլորայից, թթվամորներից մեկուացնել օգտակար շատ տեսակի կերային ու խմորիչ շաքարամներ:

Այդ հետազոտությունները հետագայում ավելի ընդլայնվեցին: 1948—1950 թվականների ընթացքում սեկտորում սկսվեց դարգանալ միկրոբիոլոգիայի նոր ուղղություններ, ինչպես, օրինակ, միկրոբանիզմների անտագոնիզմը, անտիբիոտիկները, արդյունաբերական միկրոբիոլոգիան և այլն:

Վերը հիշված հետազոտությունների ընդլայնման գործում կարևոր դեր խաղացին սեկտորի կողմից պատրաստված երիտասարդ կադրերը, որոնց թիվը տարեցտարի մեծացավ:

Թե միկրոբիոլոգիայի սեկտորի աշխատակիցների կոլեկտիվը ինչպիսի կազմ է ունեցել ըստ հնդամյակների, ցույց է տրված աղյուսակ 1-ում:

#### Աղյուսակ 1

Կառուքերի աճն ըստ հնդամյակների

Տարեթիվ	Ավագ դիտ. աշխատաղ	Երաժշտություն			Գիտական և վարչական աշխատաղ
		ս ր ի ց	ս ր ի ց	ս ր ի ց	
1943	16	5	—	3	3
1948	28	7	1	5	6
1953	30	10	2	6	1
1958	39	10	3	7	5
1963	95	13	5	8	28

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ում բերված տվյալները, միկրոբիոլոգիայի սեկտորի աշխատակիցների կոլեկտիվը ըստ հնդամյակների աճել է ոչ միայն քանակապես, այլև որակապես:

Այսպես՝ եթե 1943 թվականին ավագ գիտական աշխատակիցների թիվը եղել է 5, ապա 1963 թվականին նրանց թիվը բարձրացել է 13-ի, եթե 1943 թվականին սեկտորը չի ունեցել գեթ մեկ գիտությունների դոկտոր, ապա 1963 թվականին գիտությունների դոկտորի աստիճան են ունեցել 5 մարդ, եթե 1943 թվականին սեկտորում աշխատել են գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող 3 մարդ, ապա 1963 թվականին՝ 10-ը և այլն:

Հայկական ՍՍԾ գիտությունների ակադեմիայի միկրոբիոլոգիայի սեկտորի օժանդակությամբ և ղեկավարությամբ գիտական աստիճան ստանալու համար դիսերտացիաներ են պաշտպանել ոչ միայն նրա, այլև ուսապուբլիկայի մի շարք գիտական հիմնարկների աշխատակիցներ։ Թե ըստ հնգամյակների դիսերտացիաների պաշտպանությունն ինչպիսի պատկեր է ունեցել, ցուց են տալիս աղյուսակ 2-ում բերված տվյալները։

## Աղյուսակ 2

ՀՍՍԾ ԳԱ միկրոբիոլոգիայի սեկտորի օժանդակությամբ և ղեկավարությամբ դիսերտացիաներ պաշտպանողների թիվն ըստ հնդամյակների (առ 1-Ն հունվարի յուրաքանչյուր թվականի)

Գիտական աստիճանը	1943	1948	1953	1958	1963	Քունհինգ տարվա ընթացքում
Թեկնածուներ	3	5	4	6	—	18
Դոկտորներ	—	1	—	4	—	5

Երիտասարդ գիտական կազմերի պատրաստման գործում, անկանած, խոշոր դեր է խաղացել ասպիրանտուրան։

ՀՍՍԾ ԳԱ միկրոբիոլոգիայի սեկտորի ասպիրանտուրայում սովորել են ոչ միայն սեկտորի ասպիրանտները, այլև եղբայրական ուսապուրիկաններից և Սովորական Հայաստանի տարրեր գիտական ու բուհական հիմնարկներից գործուղվածներ։ Թե ըստ հնգամյակների ինչպիսի պատկեր է ունեցել ասպիրանտների թիվը, ցուց է արվում աղյուսակ 3-ում։

Միկրոբիոլոգիայի սեկտորը շնորհակալ աշխատանքներ է կատարել ոչ միայն գիտական կազմերի պատրաստման, այլև գյուղատնտեսության, սննդարդումաբերության և առողջապահության գծով աշխատող միկրոբիոլոգների որակավորման գործում։ Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի ուսանողներից շատերը իրենց դիվլումային աշխատանքները կատարել են միկրոբիոլոգիայի ինստիտուտի լաբորատորիաներում։

Միկրոբիոլոգիայի սեկտորում են նաև վերարակավորվել ժողովրդական միկրոբատական հրկրներից զործուղված զիտական աշխատակիցներ (Ճեճաստանից՝ 2 մարդ 1961 և 1962 թթ., Բուղարիայից 1 մարդ—1960 թ.):

Աղյուսակ 3

ՀԱՅՈՒ ԳԱ ԺԻԿԵՐԾՔԻ ԱՆԿՏՈՐԻ ԱԽՎԵՐՄԱՆ ԽԵԲ ԲԻԳԸ  
ԲԱՄ ՀԱՊԱԺՄԱԿՆԵՐԻ

ՀԱՄԱԺՄԱԿՆԵՐԻ	ՀԱՄԱՀԱՄԱՐ		ՎՐ. ՍՍԾ		ԱՊ. ՍՍԾ		ՀԱՊ. ԲԻԳԸ
	ԱՆԿՏՈՐ	ԱՆԿՏՈՐ	ՎՐ. ԱՆԿՏՈՐ	ՎՐ. ԱՆԿՏՈՐ	ԱՊ. ԱՆԿՏՈՐ		
1943	1	—	—	—	—	—	1
1948	2	—	—	—	—	—	2
1953	—	—	—	—	—	—	1
1958	4	—	—	—	—	—	8
1963	1	—	—	—	—	—	4
ՔԱՄԱՆՇԻՆԴ ՄԱՐՎԱ	8	2	2	1	2	1	16
ԸՆԹԱՑՔԸՆԴ							

Միկրոբիոլոգիայի ինստիտուտը կազմերի պատրաստման զուգընթաց զգալի հաջողություններ է ձեռք բերել նաև լաբորատորիաների լայնացման ու նրանց նորագույն սարքավորումներով հարըստացնելու զործում:

Հայկական ՍՍԾ զիտությունների ակադեմիայի նախագահությունը, հաշվի առնելով միկրոբիոլոգիայի սեկտորի կողմից ստացված տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունեցող արդյունքները, զգալի թվով գիտական աշխատողների առկայությունը, ինչպես նաև կենսաբանական զիտությունների զարգացման և ժողովրդական տնտեսության հարածուն պահանջմունքները բավարարելու համար միկրոբիոլոգիական գիտահետազոտական աշխատանքների կարևոր նշանակությունը, որոշում է ակադեմիայի միկրոբիոլոգիայի սեկտորի բազայի վրա կազմակերպել միկրոբիոլոգիայի ինստիտուտ, և ինդրում է ՀՍԾ Մինիստրների սովորական

թուլլատրել նշած ինստիտուտը կազմակերպել ակադեմիայի սիստեմում<sup>1</sup>:

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետը, բավարարելով ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի խնդրանքը, որոշում է<sup>2</sup> միկրոբիոլոգիայի սկզբունքությունների ակադեմիայի սիստեմում կազմակերպել միկրոբիոլոգիայի ինստիտուտ, միաժամանակ անհրաժեշտ է գտնում միկրոբիոլոգիայի ինստիտուտի հիմնական ուղղությունը՝ համարել՝

ա) հողային միկրոբանիզմների և կուլտուրական բուսերի փոխազդեցության ֆիզիոլոգիային վերաբերող հարցերի մշակումը.

բ) տնտեսության մեջ միկրոբանիզմների անտագոնիզմի, անտիբիոտիկների և միկրոբային մետաբոլիտների կիրառման հնարավորությունների հարցերի մշակումը.

գ) բարձրորակ միկրոբանիզմների կիրառմամբ ռեսպուբլիկայի սննդարդյունաբերության համար տեխնոլոգիական նոր եղանակների մշակումը.

դ) բուսերի բակտերիալ հիվանդությունների հարուցիչների հայտնաբերումն ու նրանց դեմ էֆեկտիվ պայքարի միջոցառումների մշակումը.

ե) վիրուսների և ֆագերի մորֆո-ֆիզիոլոգիական հատկանիշների դրսևորումը նրանց ու բարձրակարգ օրգանիզմների միջև գործություն ունեցող փոխազդեցության բնույթի պարզաբանումը:

Նոր կազմակերպված միկրոբիոլոգիայի ինստիտուտը Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ<sup>3</sup> ունի հետևյալ կառուցվածքը՝

1. Հողի միկրոբիոլոգիայի լաբորատորիա.

2. Արդյունաբերական միկրոբիոլոգիայի լաբորատորիա.

3. Ակտիվ միկրոբային մետաբոլիտների (անտիբիոտիկների և այլն) լաբորատորիա.

4. Բույսերի հիվանդածին միկրոբանիզմների լաբորատորիա:

Ստորև տալիս ենք միկրոբիոլոգիալի առանձին ուղղությունների ձևորած գիտական նվաճումները:

<sup>1</sup> Հիմք՝ ՀՍՍՌ ԳԱ նախագահության 1961 թ. մարտի 23-ի նիստի № 6 (429) արձանագրություն, կետ 57:

<sup>2</sup> Հիմք՝ ՀՍՍՌ Մինիստրների սովետի 1961 թ. հունիսի 6-ի № 333 որոշումը:

<sup>3</sup> Հիմք՝ ՀՍՍՌ ԳԱ նախագահության 1961 թ. սեպտեմբերի 19-ի նիստի № 15 (429) արձանագրություն, կետ 133:

## II Գիտական նվաճումներ

1. Հողի միկրոբիոլոգիա.— Հայաստանի հողերի միկրոֆլորայի, նրանց առանձին ֆիզիոլոգիական խմբերի ընութագրման աշխատանքներում մեծ տեղ էն գրավվում և տեսական ու գործնական կարելոր նշանակություն ունեն Հայաստանի աղակալած հողերին (աղուտներին) վերաբերող հետազոտությունները<sup>3</sup>: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքները ցույց ավեցին, որ Հայաստանի աղուտներում ինտենսիվ միկրոբիոլոգիական պրոցեսներ են տեղի ունենում և, որ կարելո՞ւ է, նրանց միկրոֆլորան շահագանց լուրահատուկ կողմեր ունի: Բացի դրանից, պարզվել է, որ աղակալած հողերում բնակվող շատ տեսակի միկրոօրգանիզմներ ակտիվ մասնակցություն են ցուցաբերում հողի լուծվող աղերի փոխակերպման պրոցեսներում, մանավանդ այն դիպրում, եթե այդ հողերի մեջ դրսից զանազան նյութեր են մուծվում, մասնավորապես՝ զիսու, ծծումբ և ծծմրացին հրաբար (կոլեկտան): Աղակալած հողերի միկրոֆլորայի երկարամյա ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր է զարձել մեկուսացնել և նկարագրել մինչև այդ գիտությանն անհայտ նոր տեսակի աղուտրակտերներ, ճառագայթասնկեր, ամոնիֆիկատորներ, միզանլութք քալիքալող բակտերիաներ, ծծմրային բակտերիաներ և այլն: Այդ հետազոտությունները հետագայում խիստ կարելոր նշանակություն ունեցան Հայաստանի աղակալած հողերն աղակերծելու, միկրոբացիայի կամ զյուղատնտեսական կուլտուրաների աճման ու զարգացման համար նրանց պիտանի հողեր գարձնելու համար:

Այդ աղակալած հողերի միկրոբիոլոգիական պրոցեսների առանձնահատկությունների պարզաբանման զուգընթաց, մշակվել են նաև մի բանի օրիգինալ մեթոդներ:

Հայկական ԱՄՌ գիտությունների ակադեմիայի միկրոբիոլոգիական հավաքական հաշխատանքներ են կատարել նաև Սևանա լճի մակարդակն իջեցնելու հետևանքով ջրից մերկացված հողագրունտների բիոլոգիական առանձնահատկությունները պարզաբանելու ուղղությամբ: Նրանց այդ հետազոտությունների ընթացքում պարզվեցին, օրինակ, տարրեր ֆիղիկո-քիմիական կազմի հողագրունտներում բնակվող միկրոօրգանիզմների տեսակային

<sup>3</sup> А. К. Паносян. Микробиологическая характеристика солончаков Армянской ССР в связи с вопросом их освоения. Ереван, 1948. изд. АН АрмССР.

կազմը, նրանց թվի ու առանձին խմբերի որակի փոփոխությունները ըստ հողագրունտների մերկացման տարիների և տարրերուտական ֆորմացիաների, ինչպես նաև հողագրունտներում հողաղացման պրոցեսների ինտենսիվությունը<sup>1</sup>:

Ուսումնասիրվել են նաև լճի ջրի միկրոֆլորայի մի քանի կարևոր տեսակների մորֆո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները<sup>2</sup>, այնպիսի միկրոօրգանիզմների, որոնց կենսական պրոցեսները կարևոր նշանակություն ունեն ջրի կենդանական ու բուսական օրգանիզմների աճման համար: Նկարագրվել են զանազան բակտերիաներ, որոնք կալցիումական աղերի մեծ ինտենսիվությամբ գոյացման պատճառ են հանդիսանում<sup>3</sup>: Իսկ այդ հետազոտությունները, կարևոր նշանակություն ունենալով ջրի բիոլոգիայում, նաև մեծ շափով կնպաստեն հողագրունտները գյուղատնտեսական մշակույթի համար պիտանի դարձնելու միջոցառումներ մշակելու գործին:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հետազոտությունները<sup>4</sup>, որոնց շնորհիվ ճիշտ դրսերվել է ազոտորակտերների և հողային այլ բակտերիաների համատեղ գործունեությունը: Բացահայտվել են այն պատճառները, թե ինչու մի շարք հողատիպերում ազոտորակտերինը դրական արդյունք չի տալիս: Ազոտորակտերների անարդյունավետ լինելու պիտակոր պատճառը հենց տվյալ հողի յուրահատուկ ֆիզիկա-քիմիական կառուցվածքն է և ոչ թե ազոտորակտերների թույլ ակտիվությունը: Այն հողատիպերում, որոնք մեծ քանակությամբ շարժուն կամ լուծելի ազոտային նյութեր են պարունակում և որոնց լուծուվթի ռեակցիան էլ ակտիվ թթվային է, ազոտորակտերներով հողի պարարտացումը բույսերի բերքատվությունը չի բարձրացնում: Այս կամ այն հողատիպերում ազոտորակտերների տարածվածության ու նրանց կենսագործունեության համար վճռական նշանակություն ունեն նաև

<sup>1</sup> А. К. Паносян. Тр. Ин-та микробиологии АН АрмССР, том XI, 1959, стр. 4.

<sup>2</sup> А. К. Паносян, М. Е. Гамбарян, Г. С. Бабаян. Изв. АН АрмССР (биол. науки), том XIII, № 10, 1960, стр. 3.

<sup>3</sup> Л. А. Ерзинкин. Микр., сборник АН АрмССР, выпуск IV, 1949, стр. 127.

<sup>4</sup> Հ. Կ. Փանոսյան, Ա. Շ. Հարությունյան, Յ. Ս. Թոռայան, Ա. Ե. Մինասյան-Հայրակ, ՍՍԻ ԳԱ Միկրոբ, ժողովածու, պրակ IV, 1949, էջ 4, նույն ժողովածու, պրակ VI, 1951, էջ 3:

հողի ջերմային ռեժիմը և խոնավության աստիճանի փոփոխությունները<sup>1</sup>:

Այս կամ այն հողատիպում ազոտոքակտերների տարածվածության աստիճանի վրա մեծ ազդեցություն են գործում նաև տվյալ հողատիպում բնակություն հաստատող մի շարք բակտերիաներ, որոնցից, օրինակ, նեխման բակտերիաներից մի քանիսը կթե ձևնշում<sup>2/3</sup> են ազոտոքակտերներին, ապա մի քանիսն էլ, ազոտոքակտերների կենսագործունեությանը նպաստելով, մեծացնում են նրանց թիվը և ինտենսիվացնում գաղային ազոտի ասիմիլացիայի ինտենսիվությունը:

Տարբեր հողատիպերում ազոտոքակտերների տարածվելու ունակության զուգընթաց փոփոխության է ենթարկվում նաև առանձին հողատիպերում գաղային ազոտի ասիմիլացիայի ինտենսիվությունը:

Ազոտոքակտերների համար ակտիվատոր միկրոօրգանիզմները ազոտոքակտերների՝ աղոտի ասիմիլացիայի վրա բարերար ազդեցություն են գործում իրենց նյութափոխանակության ժամանակ միջավայրում առաջացրած խթանի նյութերով: Պարզվում է, որ այդ երկու տարրեր ֆիզիոլոգիական խմբերի միկրոօրգանիզմները, երբ բույսերի որդուֆերայում համատեղ են զարգանում, նախ ավելի ինտենսիվ են ընթանում բույսերի աճեցողությունն ու զարգացումը, բույսերի բորբոքիլը, շաքարները, սպիտակուցները, մոխրային նյութերը շատանում են և երկրորդ բարձրանում է բույսերի բերքատվությունը<sup>4</sup>:

Տեսական և գործնական կարենոր նշանակություն ունեն այն հետազոտությունները, որոնք վերաբերում են Հայաստանի տարբեր հողակերպայական պայմաններում զարգացող պալարաքակտերիա-

<sup>1</sup> А. В. Киракосян, Н. А. Зубистян, Р. С. Каримян, Р. М. Ахинян, Л. Г. Анианян. Микробиолог. сборник, вып. VIII, 1955, стр. 191; вып. IX, 1958, стр. 3; вып. X, 1961, стр. 291, и Изв. АН Арм. ССР (биол. науки), том VIII, № 7, 1955, стр. 35.

<sup>2</sup> Ե. Գ. Ա ք ք ք չ ա ն ե ն, Բ. Շ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ե ւ ն ե ւ լ ա լ ի կ ա լ լ ի կ ա լ լ ի մ ա յ ա կ ա ն, Մ ի կ ր ո ր ո ւ թ յ ո ւ ն ե ր ը, 1953, է լ 17.

<sup>3</sup> А. К. Паносян, Р. С. Арутюнян, Ш. С. Тараян. Микроб. сборник АН АрмССР, вып. XI, 1961, стр. 219.

<sup>4</sup> А. К. Паносян, Р. Ш. Арутюнян, З. В. Маршавина, Н. А. Аветисян, С. В. Закарян, В. Г. Никогосян. ДАН АрмССР, XXXI, № 2, 1960, стр. 117; XXXIII, № 2, 1961, стр. 73; XXXV, № 3, 1962, стр. 141.

ների բիոլոգիական առանձնահատկությունների պարզաբանմանը<sup>1</sup>: Վերջին տասնամյակների ընթացքում հետազոտվել են, մասնաւորապես, թիթեռնածաղկավոր բույսերի պալարաբակտերիաների էկոլոգիական առանձնահատկությունները: Պարզված է, որ պալարաբակտերիաների մորֆոլոգիական փոփոխությունները կախված չեն էկոլոգիական պայմաններից, ընդհակառակը, վերջիններս այդ բակտերիաների բիոքիմիական ու ֆիզիոլոգիական հատկանիշների մեջ խորը փոփոխություն են առաջացնում և պալարիկներում պալարաբակտերիաների բակաերիոիդ ձևերը կարենու դեր են խաղում գաղացին աղոտի ասիմիլացիայի ընթացքում:

Պալարաբակտերիաների տարբեր էկոտիպերի ակտիվությունը և նրանց էֆեկտիվությունը շատ ավելի բարձր էն լինում այն հոգածիպերում, որտեղից նրանք մեկուսացվում են: Դա նշանակում է, որ պալարաբակտերիաներն ընտելացել են տվյալ պայմաններին, և եթե նրանք փոխադրվում են այլ հողային պայմաններ, ապա սպասված արդյունքը չեն տալիս: Այս կամ այն հողային պայմաններին պալարաբակտերիաների հարմարվելու ընդունակության վրա մեծապես ազդում են նաև հողի ջերմային ռեժիմը և միջավայրի ռեակցիայի ընույթը:

Միջավայրի պայմաններին պալարաբակտերիաների հարմարվողականությունը ու բոլոր դեպքերում է միանման արտահայտվում: Այսպես, կորնգանի պալարաբակտերիաները, ի տարբերություն այլ տեսակի պալարաբակտերիաների, չեն ցուցաբերում նըման բնույթի հարմարվողականություն:

Հետաքրքիր են նաև այն հետազոտությունները<sup>2</sup>, որոնք վերաբերում են պալարաբակտերիաների ու թիթեռնածաղկավոր բույսերի ոիզոսֆերայում զարգացող հողային այլ խմբերի միկրոօրգանիզմների միջաւասակային փոխհարաբերությունների բնույթի պարզաբանմանը: Պարզված է, որ թիթեռնածաղկավոր բույսերի ոիզոսֆերային որոշ բակտերիաներ, բարձրացնելով այդ բույսերի բերքատվությունը, բարձրացնում են նաև պալարաբակտերիաների էֆեկտիվությունը:

Պալարաբակտերիաների ու թիթեռնածաղկավոր բույսերի փոխհարաբերության ֆիզիոլոգիական բնույթի վերաբերյալ կատարված

<sup>1</sup> А. П. Петросян. Экологические особенности клубеньковых бактерий в АрмССР, Ереван, 1959, изд. НКЗ АрмССР.

<sup>2</sup> А. К. Меграбян. Микроб. сборник АН АрмССР, вып. V, 1950, стр. 179; вып. 9, 1957, стр. 24.

Հետազոտությունները<sup>1</sup> պարզել են, որ թիթեռնածաղկավոր բույսերի ու պալարաբակտերիաների սպեցիֆիկությունը հիմնականում վերապահված է տվյալ բույսի արմատահյութին:

Բույսի արմատահյութն է, որ կարողանում է գեպի տվյալ բույսի պալարաբակտերիան ընտրողականություն ցուցաբերել: Այդ հյութը նաև պալարաբակտերիայի այլ տեսակների վրա բակտերիցիդ ազդեցություն է գործում: Այսպիսով, պալարաբակտերիաների ու թիթեռնածաղկավոր բույսերի փոխարարերության ֆիզիոգիական ներքին գործոնները դրսնորում են բակտերիաների վիրուշնառությունը և բույսերի ընտրողական բակտերիցիդությունը:

Թիթեռնածաղկավոր բույսերի արմատային արտադրանքների կազմի մեջ պարունակում են և բակտերիցիդ, և խթանիչ նյութեր: Թիթեռնածաղկավոր բույսերի արմատները, ցողուններն ու տերևներն իրենց յուրահատուկ պալարաբակտերիաների համար ունեն խթանիչ նյութեր, որնք ավելի շատ արտադրվում են կոկոնակալման փուլում, ծաղկման ժամանակ նրանք փոքր-ինչ նվազում են, իսկ պտղակալման ընթացքում համարյա անհետանում են:

Վերջին տարիներում շատ թիթեռնածաղկավոր բույսերի աճման ու զարգացման վրա աճմանը նպաստող նյութերի ազդեցությունը բացահայտելու նպատակով կատարված հետազոտությունները<sup>2</sup> պարզել են, որ թիթեռնածաղկավոր բույսերի վրա ֆիզիոգիապես ակտիվ նյութերի ազդեցությունն արտահայտվում է երկու էտապով. 1. ավելի վաղ էտապ, երբ հետերոառևսինի կիրառմամբ բույսն ուժեղացնում է իր արմատների աճեցողությունը և պալարիկների գոյացումը ու նպաստում է բերքատվության բարձրացմանը, 2. ավելի ուշ էտապ, երբ զիրերելինի օգտագործմամբ բույսն սկսում է ուժեղացնել իր վիրերեկյա մասերի՝ ցողունների ու տերևների աճեցողությունը:

Սովորական Հայաստանում, արմատներում պալարիկներ առաջացնող ոչ թիթեռնածաղկավոր բույսերից առաջին անգամ հան-

<sup>1</sup> Մ. Կ. Չալախյան, Ա. Ա. Մեցրաբյան և այլ. ԱՆ Արմ. ՀՀ (Ե. Խ.), տոմ VIII, № 3, 1955, стр. 61; տոմ XI, № 2, стр. 157; № 8, 1958, стр. 3; ԴԱՆ ԱրմՀՀ (Ե. Խ.), տ. XX, № 3, 1955, стр. 39; տ. XXV, № 2, 1957, стр. 81; տ. XXVI, № 2, 1958, стр. 103.

<sup>2</sup> Մ. Խ. Չալախյան, Ա. Ա. Մեցրաբյան, Հ. Ա. Կարապետյան, հ. Լ. Կալաջյան. Խայտառ ԱՆ ԱրմՀՀ (Ե. Խ.), տ. XIV, № 12, 1961, стр. 25; ԴԱՆ ԱրմՀՀ, XXXVI, № 3, 1963, стр. 189.

զամանորեն հետազոտվել է<sup>1</sup> փշատենու արմատների պալարիկ-ների բիոլոգիան: Եթե փշատենու արմատների վրա պալարիկների առաջացման էությունը, մինչև վերջին ժամանակներս համարվում էր առեղծվածային, ապա հիշյալ աշխատանքների շնորհիվ պարզ-վում է, որ փշատենու արմատների պալարիկների առաջացումը նույնպես յուրահատուկ պալարաբակտերիաների կենսագործու-նեության արդյունքն է:

Սեանա լճի ջրերից մերկացած հողագրունտներում տարածված պալարաբակտերիաների տեսակային կազմին և նրանց մորֆո-ֆի-զիոլոգիական առանձնահատկություններին վերաբերող հետազո-տությունները<sup>2</sup> պարզել են, որ այդ հողագրունտները բավական հարուստ են տարբեր տեսակի պալարաբակտերիաներով և, երբ նույն հողագրունտներում աճող վայրի թիթեռնածաղկավոր բույ-սերի արմատների պալարիկներից մեկուսացված պալարաբակ-տերիաներով վարակում են վայրի թիթեռնածաղկավոր բույսերի սերմերը, նրանց բերքատվությունն զգալիորեն բարձրանում է, իսկ երբ նրանցով կուլտուրական թիթեռնածաղկավոր բույսերի սեր-մերն են վարակում, նրանցից կամ էֆեկտ չի ստացվում, կամ լըն-չին շափերով է բարձրանում բերքատվությունը: Իսկ եթե, հակա-ռակը, կուլտուրական թիթեռնածաղկավոր բույսերի արմատների պալարիկներից մեկուսացված պալարաբակտերիաներով վայրի թիթեռնածաղկավոր բույսերի սերմերն են վարակում, նրանք տալիս են բարձր էֆեկտ, երբեմն, նույնիսկ այդ էֆեկտն ավելի բարձր է լինում, քան իրենց՝ կուլտուրական թիթեռնածաղկավոր բույսերի սերմերը վա-րակելու դեպքում: Այդ հատկանիշը, հավանական է, կախված է կուլտուրական ու վայրի թիթեռնածաղկավոր բույսերի ֆիզիոլոգիա-կան և իմունացման առանձնահատկություններից:

Պալարաբակտերիաների բիոլոգիային վերաբերող հիշյալ աշ-խատությունները ոչ միայն մեծ նշանակություն ունեցան Սովետա-կան Հայաստանի գյուղատնտեսության համար, այլև պալարա-բակտերիաների մասին եղած համաշխարհային գրականությունը հարստացրին նոր տվյալներով:

<sup>1</sup> А. К. Паносян. Микроб. сборник АН АрмССР, вып. I, 1943, стр. 147.

<sup>2</sup> А. П. Петросян. Тр. Ин-та микробиологии АН СССР, т. XI, 1951, стр. 177.

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի միկրոբիոլոգիական հերթի հոգի միկրոբիոլոգիայի բևագավառում ձեռք բերած հաջողությունների վերաբերյալ մանրամասն տվյալներ կարելի է գտնել Հ. Կ. Փանոսյանի, Ա. Պ. Պետրոսյանի հոդվածում:

2. Ակադիկ միկրոբաշին մետաբոլիզմներ.— Վերջին տարիների ընթացքում Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի միկրոբիոլոգները, ուսումնասիրելով մասնավորապես սպորավոր բակտերիաների անտազոնիստական հատկանիշները, պարզել են, որ նրանցից մի քանի տեսակներ կարող են լայն շափերով օգտագործվել բուսաբուծության մեջ՝ բակտերիալ հիվանդությունների զեմ պայքարելու համար<sup>2</sup>: Այդ հետազոտությունների ընթացքում ապացուցվել է, որ սպորավոր բակտերիաներից մի քանի թրենց կենսագործունեության ընթացքում արտադրում են շատ արժեքավոր բակտերիաները, որոնց արտադրած անսիրիոտիկ նյութերն սպառագիտական են: Այսպիսի անտիբիոտիկ նյութերը արտադրում ապացուցություն են այս սպորավոր բակտերիաների, որոնց արտադրած անսիրիոտիկ նյութերն սպառագիտական են անկային հիվանդություններ առաջացնող միկրորդանիզմների վրա: Օրինակ՝ տոմատի, տարղեղի, կաղամթի և սմբուկի (բաղրիչանի) բակտերիալ հիվանդություններ առաջացնող միկրոօրգանիզմներն այդ անտիբիոտիկների ներգործություններից արագ ոչնչանում են: Այսպիսի անտիբիոտիկ նյութերը արտադրող սպորավոր բակտերիաների կուլտուրալ հեղուկը նույնական սպանիչ ազդեցություն է զործում տոմատի բաղրիկի հարուցիչ բակտերիայի վրա: Խնչակն փորձերը ցույց են տվել, նման անտիբիոտիկ նյութերով տոմատի սածիները մշակելու դեպքում, վերջիններս ոչ միայն բաղցեղով չեն հիվանդանում, այլև նրանց աճեցողությունն ինտենսիվանում է, և բարձրանում է տոմատի բերատվությունը ( $20-30\%$ -ով):

Նույն այդ ուղղությամբ աշխատող գիտնականները հետազատարիների ընթացքում հետազոտելով սպորավոր բակտերիաների կենսական պրոցեսների առանձնահատկությունները, ցույց են տվել, որ այդ բակտերիաներն իրենց կենսագործունեության ընթացքում միջավայրում առաջացնում են գիրերելինանման և հետերոպուրինանման նյութեր: Այդ առումով էլ ավելի կարևոր են

<sup>1</sup> ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր (բիոլ. գիտ.), հատ. XIII, № 11, 1960, էջ 37:

<sup>2</sup> Э. Г. Африкян. Бактерии антагонисты и их применение, 1959, изд. АН АрмССР.

Bac. megaterium, Bac. subtilis-mesentericus, Bac. idiosus, Bac agglomeratus բակտերիաները:

Պարզվում է, որ միկրոբանիզմների անտագոնիստական հատկանիշը տեսակային առանձնահատկություն է և այն չի արտահայտվում միևնույն տեսակների միջև, այլ երեսմ է տարատեսակների շրջանում: Այդ հատկանիշն ապացուցվել է նաև տարբեր տեսակի ազոտորակածների փոխադարձ խաշաճև աղղեցությունն ուսումնասիրվելիս:

Ճառագայթասնկերի տարբեր տեսակների անտագոնիստական հատկանիշների պարզաբանման ուղղությամբ տարվող հետազոտությունները<sup>1</sup> ցույց են տալիս, որ հողային ճառագայթասնկերից շշաերն օժտված են տոմատի քաղցկեղ հիվանդության հարուցիչի և ծխախոտի շեշտություն առաջացնող բակտերիաների նկատմամբ լավ արտահայտված անտագոնիստական հատկությամբ:

Լայն հետազոտական աշխատանքներ են կատարված բուսաբուժության մեջ անտիբիոտիկների կիրառման նշանակությունը պարզաբանելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նշել, որ միկրոբիոլոգիայի ինստիտուտի աշխատակիցներն այդ բնագավառի հետազոտողների շրջանում պիոններներ են հանդիսանում: Դեռ 1948—1953 թվականներին առաջին անգամ ցույց տրվեց<sup>2</sup>, որ անտիբիոտիկներից մի քանիսի օգտագործումով հնարավոր է պտղատու բույսերի հիվանդությունների դեմ պայքարել: Հետագայում ապացուցվեց<sup>3</sup> նաև, որ անտիբիոտիկները բույսերի մեջ ներծծվելով, հեշտությամբ տարածվում են համարյա բոլոր օրգաններում:

Անտիբիոտիկների այդ հատկանիշը բուսաբուլծներին հնարավորություն է տալիս ոչ միայն հեշտությամբ նրանց օգտագործելի ինֆեկցիաներից բռվածքը զերծ պահելու, այլև վերջիններիս աճեցողությանը և զարգացմանը խթանելու համար:

Լայն հետազոտական աշխատանքներ են կատարվել սպորավոր բակտերիաներին կարգաբանելու, նրանց առանձին տեսակների

<sup>1</sup> Հ. Կ. Փանոսյան, Վ. Գ. Թումանյան — ՀՍՍՌ ՄԻԿՐՈԲԻՈՒԹԻՒՅԻ պարզաբանություն, պրակ V/I, 1953, էջ 75:

<sup>2</sup> Р. О. Мирзабекян. Изв. АН АрмССР, № 1, 1946, стр. 3; Изв. АН СССР (биол. н.), № 2, 1953, стр. 67.

<sup>3</sup> Э. Г. Африкян, В. Г. Туманян, Р. А. Бобикян. Микроб. сборник, вып. 10, 1958, стр. 69. Сб. „Применение антибиотиков в растениеводстве“, 1961, стр. 57, 111.

թիոլոգիայի ու բույսերի ոիզոսֆերայում զարգանալու առանձնա-  
հատկությունների պարզաբանման ուղղությամբ:

Ներկայումս միկրորիոզիայի ինստիտուտում հավաքված են  
բավական շատ տեսակների պատկանող սպորավոր բակտերիաներ:  
Նրանցից շատերը նոր են նկարագրված, և մի քանիսն ունեն կիրա-  
ռական կարևոր նշանակություն:

Վերջին հինգ տարվա ընթացքում ինստիտուտում ծավալուն  
աշխատանքներ են կատարվում սպորավոր բակտերիաների էնտո-  
մոպաթոգեն հատկությունը բացահայտելու ուղղությամբ։ Այս ուղ-  
ղությամբ կատարված աշխատանքները վերջին ժամանակներս մեծ  
հետաքրքրություն են առաջացրել, քանի որ, ըստ հետազոտողների  
տվյալների, բույսերի վնասատու միջատների դեմ էնտոմոպաթո-  
գեն բակտերիաներով պայքարելը առավել էֆեկտիվ հնարավորու-  
թյուններ է ստեղծում:

Ակտիվ միկրոբային մետաբոլիտների լաբորատորիայում ար-  
դեն մեկուսացվել և ուսումնասիրվել են ավելի քան երեք հազար  
տարրեր տեսակի սպորավոր բակտերիաներ, որոնց մեջ քիչ շեն  
այնպիսները, որոնք առաջացնում են շատ ակտիվ ներգործող էն-  
տոմոպաթոգեննային թույներ:

Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն  
հետազոտությունները, որոնք վերաբերում են շերամի որդի բակ-  
տերիալ հիվանդությունների դեմ անտիբիոտիկներով պայքարելու  
նշանակության բացահայտմանը:

Այդ ուղղությամբ կատարված աշխատանքները ցույց են տվել,  
որ մի շարք անտիբիոտիկներ ոչ միայն շերամի որդի հիվանդու-  
թյունների դեմ պայքարելու համար շատ էֆեկտիվ միջոցներ են  
հանդիսանում, այլև որդի զարգացման վրա խթանիչ ներգործու-  
թյուն թողնելով, բարձրացնում են նրա արդյունավետությունը:

Որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ էնտոմոպաթո-  
գեն բակտերիաներն ունեն վիտամիններ և ամինոթթուներ յուրաց-  
նելու շատ յուրահատուկ բիոբիմիական առանձնահատկություն-  
ներ, որոնք, անկասկած, կարևոր նշանակություն կարող են ունե-  
նալ տարրեր տեսակի էնտոմոպաթոգեն բակտերիաների պաթոգե-  
նեղի աստիճանը բացահայտելու համար:

<sup>1</sup> Թ. Գ. Աֆրիկյան. Իշխ. ԱՀ ԱրմССР (биол. науки), տ. XVI  
№ 1, 1963, стр. 23.

Վերջին տարիներում ծավալուն աշխատանքներ են կատարվել սպորավոր բակտերիաների բակտերիոֆագիայի ուղղությամբ։ Այդ աշխատանքների ընթացքում մեկուսացվել են սպորավոր բակտերիաների ավելի քան 100 ֆագ։ Ուսումնասիրվել են նրանց բիոլոգիական առանձնահատկությունները, առանձին հողերում տարածվածության աստիճանը և այլ հատկանիշներ։ Ֆագերի կիրառմամբ պարզաբանվել են սպորավոր բակտերիաների կարգաբանման համար անհրաժեշտ շատ հարցեր։ Հետաքրքրական ու կարևոր աշխատանքներ են կատարվել տարրեր տեսակի սպորավոր բակտերիաներից հակաֆագային անտիբիոտիկների հայտնաբերման ուղղությամբ։

Որոշ հետազոտություններ<sup>2</sup> ցույց են տալիս, որ առանձին հողափակում վիտամին  $B_{12}$ -ի քանակը, որպես կանոն, պայմանավորված է տվյալ հողատիպերում բնակություն հաստատած միկրոֆլորայի կազմի մեջ մտնող այդ վիտամինն արտադրող բակտերիաների տարածվածությամբ և վերջիններիս կենսական պրոցեսների ինտենսիվությամբ։

Հայտնաբերված են այնպիսի սպորավոր բակտերիաներ, որոնք ավելի շատ վիտամին  $B_{12}$  են կուտակում, ինչպես նաև բացահայտված են այն պայմանները, որոնց առկայությամբ վիտամին  $B_{12}$  արտադրելու ունակությունը մեծանում է։

Ներկայում ակտիվ միկրոբների մետաբոլիտների լաբորատորիայի գիտական աշխատակիցներն զբաղված են տարրեր տեսակի սպորավոր բակտերիաների՝ մի շարք ազատ ամինոթթուններ սինթեզելու առանձնահատկությունների պարզաբանման աշխատանքներով՝ նպատակ ունենալով գտնել այնպիսի սպորավոր բակտերիաներ, որոնք ընդունակ լինեն արտադրելու կենսականորեն շատ անհրաժեշտ ամինոթթուններ (գլյուտամինային թթու, լիզին, մետիոնին և այլն)։

3. Ֆիտոպարոգեն միկրոօգանիզմներ։ — Սովետական Հայաստանում առանձնապես կարենք և արժեքավոր հետազոտություններ են կատարվել տոմատի բակտերիալ հիվանդությունների

<sup>1</sup> В. Г. Туманян, Л. Б. Саруханян. Микроб. сборник АН АрмССР, вып. XI, 1961, стр. 282.

<sup>2</sup> Э. Г. Африкян, Р. А. Бобикян, З. Г. Авакян. Микроб. сборник, вып. XI, 1961, стр. 272.

Э. Г. Африкян, Р. А. Бобикян. ДАН АрмССР, т. XXIX, № 2, 1959, стр. 89.

ուսումնասիրության բնագավառում։ Մասնավորապես, լայնորեն հետազոտվել են բանջարանոցային կուլտուրաների բակտերիոզները։ Բացահայտվել է տոմատի դագաթնային փտախտ հիվանդության բնույթը և նկարագրվել է հիվանդության հարուցիչի բիոլոգիան։

Հետաքրքրական է կարեւը են այն հետազոտությունները<sup>1</sup>, որոնք վերաբերում են տոմատի, այսպէս կոչված, բաղցկել հիվանդության ախտանիշների բացահայտմանը։

Տոմատի բաղցկել հիվանդությունը հմեյալիան վնասներ է պատճառում տնտեսությանը։ Նույր սերուղիական եղանակներով կատարված այս հիվանդության էթիոլոգիայի հետազոտությունը պարզել է, որ տոմատի բաղցկեղը առաջանում է յուրահատուկ բակտերիայի (Coryn. michiganense) կենսագործունեության հետեւանքով։ Այդ բակտերիան վարակը տարածում է տարբեր ուղիներով։ Քաղցկեղով վարակվում են տոմատի ոչ բոլոր տեսակները և, որ կարեւըն է, աստիճանական վարակման մեթոդով և ընտրության եղանակով կարելի է տոմատի բաղցկեղադիմացկուն սրբության ախտանալ։ Այդ տեսակներից էլ հիշյալ աշխատանքները ոչ միայն տեսական, այլև գործնական մեծ նշանակություն են ստանում։

Տոմատի բաղցկեղից բացի, հանգամանորեն հետազոտվել են նաև տոմատի, այսպէս կոչված, թաց փտախտ և մի բանի բանջարանոցային կուլտուրաների ու տոռտիկ բակտերիալ հիվանդությունները։

Բանջարանոցային կուլտուրաների հիշյալ բակտերիալ հիվանդությունների զեմ կարելի է պայքարել մի բանի քիմիական պրեպարատներով և անտիբիոտիկներով։

Պարզվել է, որ կան շատ բույսեր, որոնց հյութի նույնիսկ փոքր քանակը արագ ոչնչացնում է հիվանդածին միկրոբներին։ Հատկապիս այն բույսերի հյութն է ֆիտոնցիդ հատկությամբ՝ օժտված, որոնք իրենց մեջ պարունակում են եթերային յուղեր, ալկալոիդներ և այլ նյութեր, որոնք միաժամանակ բույսերին զանազան հիվանդություններից զերծ պահելով, նրանց դարձնում են ավելի զիմացնուն։ Փարզվել է նաև, որ ձակնդեղի արմատապալի ուսուցքավորումը բակտերիալ բնույթ է կրում և, որ կարեւըն է, այդ հիվանդության հարուցիչը և այլ ֆիտոպաթոգեն բակտերիաներ իրենց կենսագործունեությամբ ոչ միայն մեծ վնասներ են պատճառում

<sup>1</sup> Р. М. Галачьян. Бактериальные болезни томатов в Армянской ССР и мероприятия по борьбе с ними, Ереван, 1958, изд. АН АрмССР.

որոշ բույսերի, այլև մննդամիջավայրում կուտակում են հետերո-  
առաքինանման և գիրերելինանման նյութեր: Վերջին բնույթի նյու-  
թերն այլ տեսակի բույսերի (ծխախոտ, եղիպտացորեն) աճեցողու-  
թյանը և զարգացմանը նպաստելով, բարձրացնում են նրանց բեր-  
քատվությունը:

Այդ տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայաց-  
նում պազատու ծառերի արմատական բաղցկեղի հարուցիչ Pseud.  
tumefaciens-ը և հակնդեղի արմատապտղի տուքերկուցյուղի հա-  
րուցիչ Xanth. beticola-ն: Այս բակտերիաների բույսերի աճեցողու-  
թյան պրոցեսին նպաստող մետաբոլիտները, մասնավորապես,  
ինչպես ցուց են՝ տալիս հետազոտությունները<sup>1</sup>, արագացնում են,  
օրինակ, գժվար արմատակալող խաղողատունների կտրոնների ար-  
մատակալման պրոցեսը:

Բազմաբնույթ դիտահետազոտական աշխատանքներ են կա-  
տարմել ծիրաններու թառամում հիվանդության բնույթը բացա-  
հայտելու ուղղությամբ<sup>2</sup>, <sup>3</sup>: Հաստատվեց, որ ծիրաններու թառամումը  
դարձնանալին հիվանդություն է և առաջանում է, մինչ այդ աշխա-  
տանքները անհայտ, յուրահատուկ բակտերիաների կենսագործու-  
